

Քննեցէ՛ք ի՛նչ է Տէրո՞ջը
հասելին. ու. կցորդ մի
ըլլա՛ք խաւարին ան.
պտուղ գործերուն,
այլ մանաւանդ
զանոնք յան.
դիմանեցէ՛ք:
Եփես. Ե. 10-11

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Վասնզի Աստուած մեզ
բարկութեան համար չը
որոշեց, հապա փրկու.
ծին ստանալու հա.
մար մեր Տէր Յի.
սուս Քրիստոսի
ծնւքով:
Ա. Թես. Ե. 9

“PANPÈRE” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնեդէրն տարեկան.—Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Պալքանեան երկիրներ 1 շիլ. ուրիշ երկիրներ 1,50 շիլ
Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

ԹԻԻ 10

Գ. ՏԱՐԻ

11 ՆՈՅԵՄԲԵՐ 1927

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆԸ

Բայց վայ այն մարդուն՝ որուն ձեռքով գայթակղութիւնը կուգայ, (Մատթ. ԺԸ. 7)

Բ.— ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆԸ

Անցեալ թիւին մէջ ջանացինք բացատրել
գայթակղութեան էութիւնը: Հասկցանք թէ ի՛նչ
կը նշանակէ գայթակղութիւն, ի՛նչ է գայթակ-
ղեցնել եւ գայթակղիլ: Այսօր պիտի ջանանք
քննել գայթակղութեան տեսակները:

Երկու տեսակ գայթակղութիւն կայ: Գայ-
թակղութիւն մը որ մարդոցմէ կուգայ, գայթակ-
ղութիւն մը որ Աստուծոմէ կը բղխի: Այս երկու
գայթակղութեանց ալ արդիւնքը նոյնը կըլլայ,
այսինքն մարդ կրնայ երկուքին պատճառով
անկաման ենթարկուիլ:

Զգարմանաբ մանաւանդ այս երկրորդ տեսա-
կին վրայ: Երբ Աստուծոյ խօսքը ուշի ուշով
քննենք պիտի տեսնենք տասնեակներով օրի-
նակներ, որոնց մէջ գայթակղութեան իսկական
պատճառը բուն իսկ Տէրը ինքն է:

Արդ տեսնենք թէ ի՛նչ է մարդկային գայ-
թակղութիւնը:

Մարդկային գայթակղութիւնը կը գոյանայ,
երբ ոեւէ վերաբերում մը, որ դիւրաւ մէկ կողմ
կրնայ դրուիլ, մարդու մը Աստուծոյ հետ ունե-
ցած յարաբերութիւնը կը վտանգէ, կը խզէ, կը
կտրտակէ:

Պետրոս թէեւ սէրէ շարժեալ եւ սակայն
մարդկային շեղեալ նախանձախնդրութեամբ կը
ջանար իր Տէրը ետ կեցնել չարչարանաց ճամ-
բայէն, սակայն խիստ ընդդիմութեան հանդի-
պեցաւ, վասնզի Տէրը տեսաւ որ Պետրոսի այդ
դիրքը եւ այդ խօսքերը գայթակղութիւն էին

իրեն, եւ իր Հօրը հանդէպ ունեցած որդիական
հնազանդութեան դիրքէն շեղեցնող. այդ՝ նոյն
իսկ գինքը անհնազանդութեան առաջնորդող,
ինչ որ սատանայական էր եւ չար: Յիսուս սա-
տանայի դրդումովը եկած այդ գայթակղութիւն
ծագեցնող պարագան ի սպառ մերժեց:

Կորնթոսի եկեղեցիին մէջ երբ հաւատացեալ
մը տեսնէ որ իր եղբայրը ոեւէ մեհեանի մը մէջ
կուոց զոհուած միս կուտէ եւ երբ մոլորի անձամբ
ուտելու՝ մինչդեռ իր խիղճը չթուլադրեր
իրեն, գայթակղութեան կը մղուի իր եղբոր
պատճառաւ, վասնզի ինչ որ հաւատքէն չէ,
մեղք է իրեն: Ասոնք միայն օրինակներ են ցու-
ցնելու այն դիրքերը որոնցմով մարդիկ կրնան
գայթակղութեան առաջնորդուիլ:

Իբր եզրակացութիւն պիտի կրնայինք ըսել,
իւրաքանչիւր արարք որ եղբոր սէրը կը վիրա-
ւորէ, գայթակղութեան կառաջնորդէ. բայց ով
որ իր եղբայրը կը սիրէ գայթակղութիւն չտար
Ա. Յովհ. Բ. 10, այսինքն իր եղբորը սէրը չվիրա-
ւորեր: Ասոր իբր կենդանի օրինակ կը տեսնենք
Յիսուսի դիրքը հանդէպ երկդրամեանը հաւա-
քող միջակ մաքի եւ դասակարգի իսրայէլացիի
մը (Մատթ. ԺԷ. 24-27): Յիսուս Պետրոսը կը զրկէ
ծուկ բռնելու եւ անոր բերնի մէջի սատէրին
կէսը իրեն եւ կէսը Պետրոսի համար վճարելու,
հակառակ անոր որ իրենք թագաւորութեան
որդի ըլլալովնին տուրք վճարելու պարտական
չէին:

Պօղոս առաքեալ տկար եղբայրը որքա՛ն

ուշադրութեան կ'առնէ (Ա. Կորնթ. Բ. 9.13),
Հռով. ԺԳ. 15-21):

Խիստ յառկանշական է որ մեր Տէրը Մատթ. ԺԶ. 6ի մէջ Պողոսի նման գայթակղութեան ենթակային մտայնութեան եւ կամքի ոյժին վրայ մեծ կշիռ կը դնէ: Խիստ կերպով կը դատաւարասէ այդ պզտիկներէն մին գայթակղեցնողը եւ անոր դատաւարտութեան ահաւորութիւնը ցոյց տալու համար կ'ըսէ «աւելի աղէկ է (նախընտրելի է) անոր՝ որ իր պարանոցէն իշու աղացքի քար մը կախուի ու ծովուն անդունդին մէջ ընկղմի»: Մէկու մը համար պարանոցէն իշու աղացքի քար մը կախուելով անդունդին մէջ ընկղմել ինչ սարսափելի դատաւարտութիւն մըն է: Այս դեռ նախանձելի է բաղդատմամբ այն դատաւարտութեան որ պիտի գայ այս պզտիկներէն մին իր հաւատքէն գայթակղեցնողին վրայ: Աշխարհի վրայ հարկ է որ գայթակղութիւններ գան: «Արդ վա՛յ աշխարհի գայթակղութիւններու պատճառաւ եւ վա՛յ այն մարդուն որուն ձեռքով գայթակղութիւնը կուգայ»: Կրկնակ վայերը ոչ միայն մէկ կողմին վրայ են, հապա ենթակային (քերկնպէս) վրայ՝ որուն միջոցաւ գայթակղութիւնը կուգայ եւ առարկային վրայ՝ որու վրայ գայթակղութիւնը տեղի կ'ունենայ: Իրողութիւն մը որ սարսափելի է: Մարդ կը չարչարուի այդ սարսափելի վիճակին մէջ եւ կը ճնշուի, կըզգայ անոր սատանայական եւ հակասութեամբ եւ ըլլալը, եւ մը կը փնտռէ, բայց չկրնար աշխարհէս վերցնել: Աշխարհի համար գայթակղութիւնը աշխարհային տեսակետով կարծես անհրաժեշտ հարկաւորութիւն մըն է: Զհարցուիք թէ այս հարկաւորութիւնը ուսկի՞ց է եւ ո՞ր տեսակէն: Արդէն ամէն անհատ կը հասկնայ թէ գայթակղութիւնը սատանայական հարկաւորութիւն մըն է ստուծեան որ սիրոյ դէմ կը կռուի, բայց ոչ ոք կը բողոքէ անոր դէմ, ռեւէ մէկը չփորձիր զայն աշխարհի օրէնքներէն վերցնել: Այսպէս անիկա ինքզինքը սկիզբէն ի վեր կը քաշքշէ, կ'աւիրէ ժամանակները, իբր ալք մը կը ճնշէ դարերու վրայ, մարդոց սէրը կ'արգիլէ եւ դեռ պիտի իշխէ մինչեւ որ ատենը գայ, երբ Տէրը, վերջին հունձքին ժամանակ այս սարսափելի տիտանին վախճան մը տայ: Արեւմտեան առակէն կը տեսնենք որ Արդին՝ մարդոյ իր հրեշտակները պիտի զրկէ Թագաւորութեան սահմաններէն բոլոր գայթակղութիւնները վերցնելու եւ զանոնք դատաստանի կրակին յանձնելու (Մատթ. ԺԳ. 41):

Պողոս ամէն բարի բաներու նախանձաւոր եւ իբր նախկին փարիսեցի մը ու եկեղեցին, այսինքն ցիսուսի հետեւորդները հալածելու վարժուող այժմ իբր առաքեալ, գայթակղութեան հանդէպ

ո՛չ թէ բիրտ ոյժով կը վարուի հապա ընդհակառակն կը թելադրէ անկէ զգուշանալ՝ եւս կե. նալ (Հռով. ԺԶ. 17):

Սպառնացող գայթակղութեան ընդդէմ՝ մեր Տէրը ինչ աննկատ սրահանջկոտութեամբ խիստ կը վարուի, յայտնի կ'ըլլայ աջ աչքին եւ աջ ձեռքին օրինակովը. (Մատթ. Կ. 29):

Թէեւ ո՛չ նոյն հեղինակութեամբ, բայց ո՛չ պակաս զօրութիւնով՝ Պողոս առաքեալ կը հակառակի գայթակղութեան դէմ իր գործակիցներուն հետ մէկտեղ, որ պէսզի աւելտարան ի պաշտօնը չարատաւորուի (Բ. Կորնթ. 2. 3):

Ասոր համաձայն ալ իր բոլոր նամակներով կը թելադրէ համայնքները զգուշանալ գայթակղեցնելէ եւ գայթակղելէ: Եւ ուստի եթէ միտ ալ չուտել հարկ ըլլայ, պատրաստ է յուստեանս միտ չուտել, որ չըլլայ թէ իր լոքայրը գայթակղի, եւ այսպէս Տէրոջը գործը վտանգուի: Ու երբ այսքան զգուշութիւններէ յետոյ դարձեալ գայթակղութիւններ տեղի կ'ունենան, այն ատեն ներքին պայծառ եւ հրդեհիւմ յառաջ կը բերեն առաքեալին սրտին մէջ, երբ նա ոչ կրքոտ բայց դառն հառաչանքով մը կ'աղաղակէ, «ո՛վ կը տկարանայ եւ ես չեմ տկարանար, ո՛վ կը գայթակղի ու իմ սիրտս չայրիւր» (Բ. Կորնթ. ԺԱ. 29):

Այս դառն, խիստ պայքարը գայթակղութեան հանդէպ, անոր համար է որ հոգի մը վտանգի կ'ենթարկուի: Այն պզտիկ խնդիր մը չէ որ շուտով կարգի կրնայ դուրս. անծի մը կեանքը արմատէն սպառնալիքի, հաւատքը յարձակման ենթակայ է. մէկու մը կեանքին, ըլլալուն ու չըլլալուն հարցի խնդիր է: Հաւատքին հոգին մասամբ այս կենսական խնդրոյն մէջ իր դերը կ'ունենայ, այս պատճառաւ առաքեալը այս հոգիէն ծնած՝ սէրը իբր ամենամեծ զէնք կը մատուցանէ այդ սարսափելի թշնամիին ընդդէմ:

Թէ այս սէրը գայթակղութեանց ընդդէմ իրաւ իսկական զէնք կրնայ ըլլայ, համոզուելու համար կարդալու է միայն Ա. Կորնթ. ԺԳ. գլուխը, վասնզի հոն կը տեսնենք սիրոյ վերլուծումը եւ անոր գործունէութիւնը եւ զսպանակը:

Սիրոյ մէջ ոչ թէ ստիպում կայ այլ յօժարութիւն, որ ճշմարտութեան սահմանէն երբեք դուրս չելլիր: Այդ կեանքին մէջ բնաւ պէտք չըլլար ճշմարտութիւնը ուրանալ սիրոյ պատճառաւ: Պէտք չըլլար անձնական խիղճը տազնաւելցնել ուրիշին խղճն համար:

Աւր որ գայթակղութենէ խուսափելու հարկ կ'ըլլայ, ճշմարտութիւնը աւելի նախամեծար պէտք է համարուի, առանց սէրը վիրաւորելու, ու երբ այս պարագային ալ գայթակղութիւն չա-

ուսչ գայ, ալ այդ գայթակղութիւնը, մարդկային գայթակղութիւն - այսինքն խոստովելի - ըլլալու սանձանէն անցած է, ատիկա Աստուածային գայթակղութիւն է, որմէ խոստովիլ անկարելի է եւ որու վրայ կ'ուզենք ծանրանալ յառաջիկայ Թիւին :

Վ Ս Տ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ի՛նչ օրհնեալ ու սքանչելի կարողութիւն մը, որով հաւատացեալը երկինքի ու երկրի տէրը կը դառնայ: Ներքին ու արտաքին բոլոր թշնամեաց յաղթելու եւ այսպէս յաղթական երկինք հասնելու համար հաւատացեալը որքան պէտք ունի ասոր, այսինքն վստահութեան:

Հաւատքի, յուսոյ եւ կատարեալ սիրոյ պտուղը եղող կատարեալ վստահութիւն, ի՛նչ մեծ օրհնութիւն է այս:

Հաւատքի պտուղը եղող վստահութիւնը, որ հաւատացեալին համարձակութիւն եւ Տէրոջը մօտենալու արտօնութիւն կուտայ. Եփես. Գ. 12:

Յուսոյ պտուղը եղող վստահութիւնը, որ անշարժ խարխիս մըն է ապաստանողին ու հաստատուն միջոցութիւն մը հաւատացեալին. Եբր. Զ. 18-19:

Կատարեալ սիրոյ արդիւնքը եղող վստահութիւնը՝ որով հաւատացեալը փորձառաքար գիտէ թէ մահէն կեանքի փոխուած է Ա. Յովհ. Գ. 14, եւ կ'ապրի, որուն մէջ այլեւս վախ չկայ. Ա. Յովհ. Գ. 18: Վստահիլ թէ Տէրը մեզ սիրեց եւ իր կանխագիտութիւնովը ընտրեց եւ կանչեց իր որդւոյն պատկերին կերպարանակից ըլլալու. Ա. Թես. Ա. 4, Հռովմ. Ը. 29:

Վստահիլ թէ Տէրը մեզի ձրի փրկութիւն շնորհեց, Եսայ. ԺԲ. 2, եւ իրեն որդիներ ըրաւ Հռովմ. Ը. 16, Ա. Յովհ. Գ. 2, ուրեմն ալ Աստուծոյ որդիներ ենք եւ յաւիտենական կեանքի ժառանգներ Ա. Յովհ. Ե. 15:

Վստահիլ թէ Յիսուս Քրիստոսով Աստուծոյ միացած ենք, Յիսուսի մարմնէն ու անոր ոսկորներէն, անոր մարմնին անդամներն ենք. Եփես. Ե. 30. ամէն ինչ Յիսուս պիտի խորհի, Յիսուս պիտի ընէ, եւ մենք միայն անոր կամքը պիտի կատարինք, Յիսուս պիտի ապրի մեր մէջ, անոր սուրբ սրտէն բղխող մաքուր արեւնն է որ այս պարզ անդամը պիտի սնուցանէ ու սողզէ: Անոր իմաստութիւնն է,

որ այս տկար անդամին գործելու ուղղութիւն պիտի տայ: Ի՛նչ օրհնեալ շնորհք, միայն թէ վստահինք եւ քալենք, Ա. Յովհ. Բ. 6:

Վստահիլ թէ մեր մէջ բարի գործ մը սկսողը մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ ալ. Փիլ. Ա. 6, Ա. Թես. Ե. 24:

Վստահիլ թէ Տէրը մեր ձայնը կը լսէ ու կը պատասխանէ ալ: Մեր երկնաւոր հայրը Յիսուս Քրիստոսով իր բոլոր զաւակներուն աղօթքը եւ խնդրուածքը միշտ լսող ու պատասխանող հայր մը ըլլալուն հաւատալ ու վստահիլ ինչ մեծ օրհնութեան դուռ մը կը բանայ հաւատացեալին առջեւ: Շատ մեծ դժուարութիւններ կը վերնան հաւատացեալի կեանքէն այս վստահութեամբ, զօրաւոր հաւատքի պտուղը եղող այս վստահութեան որքան կարօտը կը քաշենք. Ա. Յովհ. Գ. 22, Ե. 14-15: Ոչ թէ հասարակ բաներու մէջ վստահիլ, այլ ամենադժուարին բաներու մէջ ալ. Մատթ. ԻԱ. 22: Վստահիլ թէ մահուան ատեն նեցուկ ու ապաւէն մը ունինք որով մահը իր սոսկում առթելու ոյժը պիտի կորսնցնէ. Սաղմ. ԻԳ. 4:

Պէյրութ գործող սիրելի եղբայր մը, որ վերջերս երկնից սուրբերուն միանալու համար վեր կանչուեցաւ Տէրոյմէն, իր վերջին ժառերուն մէջ վստահաբար ըսած է, «Տէրը ամուր է, ամուր է, եւ ես անոր վրայ հաստատուած եմ, ի՛նչ օրհնեալ վստահութիւն եւ ի՛նչ սքանչելի ու բաղձալի մահ»: Այս եղբօր մահուան լուրը տրամեցուցած էր զիս, բայց երբ նամակէ մը այս խօսքերը կարդացի, տրամութիւնս ուրախութեան փոխուեցաւ, Ա. Թես. Գ. 16-17:

Վերջապէս վստահիլ փառաւոր յարութեան մը, մահը որ քուն մըն է ամենուս համար, որմէ փառքով պիտի արթնանք օր մը երբ մեր սիրելի Փրկիչը յայտնուի եւ անոր դէմքին լուսովը պիտի կշտանանք, ահա ասոր վստահիլ եւ խաղաղութեամբ քնանալ. Սաղմ. ԺԷ. 15: Բոլորովին վստահ ըլլալով թէ նորոգուած ու փառաւոր մարմնով մը պիտի արթնանք, մեր Փրկչին փառաւորեալ մարմնին կերպարանակից՝ ու Անոր պէս եղած, զայն տեսնելու երես առ երես, օրհնեալ յոյս եւ օրհնեալ վստահութիւն, Փիլ. Գ. 21, Ա. Յովհ. Գ. 2:

Վստահութիւնը սատանայի բոլոր ոյժերը ջախջախող ու անոր բոլոր յարձակումները իղերեւ հանող կարողութիւն մըն է, հաւա-

տացեալը ասոր կանչուած եւ ասոր համար ընտրուած է :

«Ուստի, եղբայրներս, աւելի ջանք ընենք որ մեր կոչումը ու ընտրութիւնը հաստատենք վասնզի զայս ընելով բնաւ պիտի չվրիպինք» :

«Վասնզի այսպէս մեզի ալ աւելի պիտի շնորհուի մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութիւնը մտնել : Բ. Պետ. Ա. 10-11 :

Ա. Օ. ՓԱՓԱՉԵԱՆ

Բճնտ Օպէհաս

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ՍՐ. ԳԻՐԲԸ ԱՄԵՆԱՕԳՏԱԿԱՐ ԿԵՐՊՈՎ

ՍԵՐՏԵԼՈՒ

Բ. Է. ԹՈՐՐԻ

(Շար. 9րդ Թիւէն)

3. ՀԱՃՈՒԹԻՒՆ ԾԱՆՐ ԳՈՐԾ ԸՆԵԼՈՒ.— Սորմին իմաստուն խորունկ կերպով կը պատկերացնէ Աստուածաշունչի այն ուսանողը, որը ամենալաւ արդիւնքի կը հասնի իր ուսումնասիրութենէն. «Որդեակ իմ եմէ իմ խօսքերս ընդունիս ու իմ պատուիրանքներս քովդ պահես, այնպէս որ ականջդ իմաստութեան տաս ու սիրող հանձարին բանաս, եմէ դուն իմաստութիւնը քեզի կանչես ու քու ծայրդ հանձարին ուղղես, եմէ զանիկա արծաթի պէս փնտռես ու ծածուկ գանձերու պէս խնդրես, ԱՅՆ ԱՏԵՆ ՏԵՐՈՋԸ ՎԱՅԻՔ ՊԻՏԻ ՀԱՍԿՆԱՍ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԳՏՆԵՍ» (Առակ. Բ. 1.5) : Արծաթը փնտռելը եւ ծածուկ գանձերը խուզարկելը ծանր գործ կը նշանակէ : Այն անձնաորում, որ կը ցանկայ Աստուծոյ խօսքէն ո՛չ միայն արծաթի, որ կը ցանկայ Աստուծոյ խօսքէն, այլ մտառութեամբ ուսումնասիրել ու խօսքը քննել, այս կերպով կարելի է առատ պտուղ քաղել : Ի՞նչ է պատճառը որ շատեր Սր. գրքէն եւ անոր ընթերցումէն շատ քիչ կ'օգտուին, որովհետեւ անոնք խորհելու ու մտածելու կամք չունին : Մտային ծուլութիւնը միակ պատճառն է Սր. գրքին ապարդիւն ըլլալուն :

Մարդիկ Աստուածաշունչը սերտելու կերպեր ու միջոցներ կը փնտռեն, բայց անոնցմէ շատերուն ուզածը պարզապէս առանց մասնաւոր աշխատանքի եւ ջանքի ու մտքի յոգնութեան Սր. գրքէն լսու եւ արդիւնաբեր անունդ քաղել է : Եմէ մէկը կրնար ծոյլ քրիստոնեանէն բուն մեծոտ մը սորվեցնել, որով իրենք կարող ըլլային Սր. գրքը սերտել, օրուան մտքով, քնատ ու ծանրաբեռնուած բոսկներուն, օրինակ, ճիշդ անկողին մտնելու ատեն ու այդ կերպով օգտուին ու օրհնուին,

Աստուծոյ իր զուակներուն համար սահմանափակ համաձայն, այն ատեն իրենց բուն փափաքին հասած կըլլային ու կը գոհանային, բայց այսպէս անհնար է : Եմէ մարդիկ կ'ողբն Աստուծոյ գրքին մէջ ամբարուած անհուն իմաստութեան, գիտութեան եւ օրհնութեան թագուն գանձերը փորել ու հանել, պէտք է յօժարին աշխատութեան եւ ԾԱՆՐ աշխատութեան :

Վաճառական բարեկամներէս մին, կարճ տեսակցութեան մը միջոցին, խնդրեց ինձմէ որ մէկ բառով բացատրեմ իրեն Եւ Սր. գրքը ինչպէս սերտելու էր : Պատասխանեցի, «ԽՈՐՀԷ» : Սաղմոսեագուն կրտէ, երանելի է այն մարդը, որ Տէրոջը օրհնքին վրայ «կը մտածէ գիշեր ու ցորեկ» (Սաղմ. Ա. 2) : Տէրը Յեսուի հրամայեց որ «գիշեր ու ցորեկ անոր վրայ մտածէ» : Տէրը խոստացաւ. Եւ քու մտածմանդ իրրեւ պտուղ այս պիտի ըլլայ, «Այն ատեն քու գործերդ յառաջ կը տանիս եւ այն ատեն յաջողութիւն կը գտնես» (Յես. Ա. 8) : Յիսուսի մօրը Մարիամի մասին կը կարդանք «Մարիամ այս ամէն բաները կը պահէր եւ իր սրտին մէջը կը մտածէր» (Ղուկ. Բ. 19) :

Միայն այս կերպով կրնայ մէկը Աստուծոյ խօսքը ուսումնասիրել եւ օգտու քաղել ու օրհնուիլ :

Մէկ փառնաւ լաւ եփուած, ծամուած, լուծուած ու մարսուած միսը աւելի ոյժ կուտայ, քան հազար քիւծ միսը, որ միայն կը դիտուի առանց իր նպատակին գործածուելու միջոցներ ձեռք առնուելու : Ճիշդ այսպէս ալ է միայն մէկ համար Սր. խօսքէն լաւ ծամուած, մարսուած, շատ աւելի օրհնութիւններ կ'ըլլայ քան երկայն գլուխներ, որոնք հարեւանցի կը կարգացուին :

Կշռէ՛ իւրաքանչիւր բառ որ Սր. գրքին մէջ կը կարդաս, քննէ՛ զայն, կրկին ու կրկին կարդա, այս կերպով քեզի սովորական եղող համարները բոլորովին նոր նշանակութիւն պիտի ունենան : Միայն տասնեօթնեակովեան [մտամիտի] զբաղուէ իւրաքանչիւր բառի վրայ Սաղմ. ԻԳ. 1. կամ Փիլիպ. Գ. 19 եւ տես Եւ այնպէս չէ՞ :

(Շար.)

ԱՊԱՍՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԸ

— 000 —

Երազիս մէջ մօտաւորապէս 3000 տարի ետ երթալով փոխադրուեցայ ապաստանի քաղաքներէն մէկին առջեւ, զոր Տէրը տուած էր Իսրայէլացիներուն, որպէսզի պատահմամբ սպաննութիւն գործողներ հան ապաստանին արեւան վրէժիմդիրներէն :

Ղեւիի որդւոցմէ մին աշտարակի վրայ կիցած կը հսկէր, մինչ դռնապանը քաղաքին դուռը կ'անցնէր շուրթեամբ ամեն կողմ կը դիտէր :

Շատ ջանցած աշտարակին վրայ հսկող Ղեւուացին նշմարեց մարդ մը որ ոգի ի բուն կը վազէր, քանզի անոր հալածիչը մեծ թափով կը մօտենար անոր : Ամէն ինչ յուզման ենթարկուած էր : Ղեւուացին բարձրաձայն աղաղակելով քաջալերական խօսքեր կ'ողղէր անոր,

դռնապանը ամէն երկվայրկեանի դուռը լայն բանալու պատրաստ կեցած էր : Սակայն առաջ, ապահովութեան վայրին միմիայն մի քանի կանգուն մնացած հալածիչը, որ հալածուողէն շատ առեւի երեսասարդ էր, հասաւ իր զոհին եւ ուժգին հարուածով մը զայն գետին տապալեց, այլեւս ուրիշ չը կանգնեցնելու պայմանով : Դիակը քաղաք տարուելով ծաղրեցաւ :

Կէս օրուան միջոցին ուրիշ երկու հոգի տեսնուեցան որ դէպի ապաստանի քաղաքը կը յառաջանային արագընթաց քայլերով : Մարդասպանին եւ իր հալածիչին միջեւ բաւական մեծ հեռաւորութիւն կար, այսու հանգիստ հալածեալը բեռ մը կը կրէր իր ուսին վրայ որ յաշտնապէս կ'արգիւիէր անոր յառաջացումը : Բայց եւ այնպէս չէր ուզեր բաժնուիլ իր այդ բեռէն, կարծես թէ կեանքէն իսկ առեւի ծանկազին կը թուէր իրեն : Ապաստանի քաղաքին կէս մղոն միայն մնացած հալածիչը անոր հասաւ եւ անիա երկրորդ զոհ մը գործեցաւ գետին :

Կէսօրէն յետոյ ժամը երեքի ատենները ուրիշ մարդ մը անեսայ երազիս մէջ, որ դէպի մեզ կը վազէր : Անիկա մինակ էր : Երբ քաղաքին մօտեցաւ սկսաւ կանգ առնել, շուրջը նայիլ եւ յամբարցնել իր քայլերը : Վերջապէս ապաստանի քաղաքին մօտ գտնուած լայնատարած կառնիկի մը տակ ինչպէս հանգիւիլ ուղեց : Երկար՝ ճամբորդութենէն յոգնած՝ քնացաւ, քուն մը որմէ այլեւս չարթնցաւ, քանզի արեւան վրէժխնդիրը խորամանկութեամբ ինքզինք ծածկելէն անոր հետեւելով՝ անոր պռուկած միջոցին խոյսցաւ անոր վրայ եւ նետի մէկ հարուածով մը մարբեց անոր հետ ունեցած իր հաշիւը :

Հազիւ թէ այդ տխուր տեսարանը տեղի կ'ունենար, երբ ուրիշ մէկը նշմարուեցաւ որ նմանապէս դէպի ապաստանի քաղաքին դուռը կը յառաջանար, եւ մինակ էր : Անորի մը նետեց ծառին տակը ինչպէս զոհին վրայ եւ արտոյնօք դռնէն ներս մտաւ : Ցաշորդ օրը սակայն ինքզինք բոլորովին ապահով զգալով քաղաքէն դուրս ելլելու յանդգնեցաւ երեք չմեղաւորաւոր պայմանով, որովհետեւ հալածիչը անոր դարանամուտ ըլլալով՝ սպաննեց զայն, որով նա կրեց իր ապաստարանէն հեռանալուն պատիժը :

ձիշդ երբ արեւը մարը մտնելու վրայ էր, մարդ մըն ալ երեցաւ որ աներեւակայելի արագութեամբ դէպի մեզ կը յառաջանար նման օրինակ արագութեամբ հալածուած արեւան վրէժխնդիրներէն : Երկուքին միջեւ գրտնուած հեռաւորութիւնը հետզհետէ կը նուազէր եւ եւս այլեւս յոյս չունէի թէ այս հալածեալին կարելի պիտի ըլլար ազատիլ : Սակայն ամէն անգամ որ հալածիչը կը մօտենար, կը անունէի որ հալածեալը իր վրայէն ծանրութիւն մը եւս կը պակսեցնէր եւ առեւի արագ թափով կը յառաջանար : Վերջապէս հալածուածը այնպէս ուժգին հանգամանք մը ստացաւ որ հալածեալը իր վրայի հագուստներն անգամ մէկդի նետելով վերջին գերմարդկային ճիգ մ'ըրար ու մտաւ ապաստանի քաղաքին դռնէն ներս : Երբ ընցի դրան մեծ շառաչումով փակուիլը՝ ազատ շունչ մը առի :

Այս ողբերգութիւններուն ակամատես ըլլալէ յետոյ քաղաքին մէջ գտնուող տեսանողին գացի եւ փափաք

յայտնեցի իմա՛ արու թէ արդեօք այս միջադէպերը մեզի քաններորդ դարու մէջ ապրողներուս ալ տրվեցնելիք դասեր ունէի՞ն : Անիկա պատասխանեց՝ «Առաջին զոհը որ տեսար կը մատնանշէ այն մարդը որ իր փրկութեան ինդիքը կը յետաձգէ միջեւ որ վերջապէս ինքզինքն զալով կը տեսնէ թէ իրեն պարգեւուած շնորհաց ժամանակը մեղանշելով անցուցած է : Խիստ փոքր է անոնց թիւը որ մահուան անկողին վրայ դարձի կուգան» :

«Այն որ բեռը ուսին յառաջանալով չկրցաւ ազատիլ իր հալածիչէն, կը ցուցնէ այն մարդը որ թէեւ փրկուելու փափաք ունի, սակայն միեւնոյն ժամանակ կ'ուզէ փարիլ այս աշխարհի հարստութեանց» : Արդեօք դուն, ով ընծերցող, այս կարգին կը վերաբերի՞ս :

«Այն որ ապաստանի քաղաքին հասաւ, սակայն վայրկեան մը ծառին տակ հանգիւիլու ջանաց, շարունակեց տեսնողը՝ «մէկ օրինակն է մեղաւորներու այն մեծ քաղցութեան որ Սուրբ Հոգիէն կ'արձնան, սակայն Սուրբ Հոգին մարելով վերջապէս կը մեռնին իրենց մեղքերուն մէջ» : Ի՞նչ վտանգաւոր վիճակ :

«Այն որ քաղաքին դռնէն ներս մտնելէ յետոյ իր ապաստանարանէն հեռացաւ օրինակն է միայն անունով քրիստոնէաց կոչուած այն անհմար բազմութեանց որ ճշմարտապէս մեզմէ չեն, վաճառի եւ մեզմէ ըլլային, անտարակոյս մեզի հետ պիտի շարունակէին : Այնք թէեւ եկեղեցիներու անդամներ են, սակայն Քրիստոսի անդամները չեն, մկրտուած են բայց ոչ վերստին ծնած» :

«Իսկ ան որ իր ընծացքը շարունակելով վերջապէս ազատեցաւ, կը ցուցնէ այն անհմար որ ամէն գնով Աստուծոյ թագաւորութիւնը մտնելու կը ձգտի՝ առանց իր անհնաւան արդարութեան ցնցոտիներուն վտանգելու» :

Սիրելի ընծերցող, ի՞նչպէս պիտի ազատիմք, եւ թէ անհոգ ըլլանք այսպիսի մեծ փրկութեան մը :

Ի Թ Ա Ա Թ Մ Է Յ Վ Է Ս Ի

Բուն իւլ Գուտտըն Իտարէսի ալթընտա քեա-
միլ ի Թաաթտա Էաշայան սատէ պիր թէրզի զը-
զը Ալլահըն Նասըլ գուլլանմը իտիյինի, Վեր-
Տը. Մարիթ շէօյլէ Նազլ էտիյօր :

Մէրգուլէ պիր վազըթ էյի կիւնէր կէօր-
միւլ, լաքին սօնրա փարլազ միւսթազպէլ իւ-
միւլէրի դարարմըլ օլարազ, կէլիմիյինի էյնէսի
իլէ դադանմազ մէհպուրիլէթինտէ պուլունույօր
Իտի, քիմէյէ միւլթաճ օլմամազ իլիւն : Եօրու-
մազ պիրմէյէն պիր դայրէթ իլէ իլլէր Իտի իտէ-
տէ՝ պազէն տէ իշիւզ պալլըր Իտի, վէ պէօյլէ
վազթլարտա սէմափի Փէսէրէ քէնտինէ իշ կէօ-
տէրմէսի իլիւն տուա էտէր Իտի : Պիր զաշ կիւն-
տէն պէրրու պօշտա դալտըլը իլիւն՝ պիր սա-
պահ եինէ իշ իլիւն Բապապ Նիյազ էյլէտի :
Պիրտէն գափու Էափաշաշա չալլընտը, վէ դայլէթ
կիւզէլ կէյիլի պիր օրիւրդ, էլիտտէ պէօյիւք
պիր փաքէթ, իլլէրի կիւրտի :

«Պէնիմ իշխան տիքիշ տիքէպիլիւրմիսինիդ, չօգ անէլէ տիրա էլպիսէլէրտէ պազը շէյլէր թէպիլիլ օլմալը, վէ սիգէ չօգ էյի իւճըլթ վէ-րէպիլիլիւրմ» :

Պու սէօզլէրի թէրզի մէսէրէթլէ տիրէտի : «Պէնտէ շիմտի պուսուսն իշխան տուա էթմիշ իտիմ», տէյէրէք՝ փաքէթի աշաը, վէ իշխանէքի էլպիսէլէրի մէյտանա զօյտու : Անլէր ազըր պահալը վէ փարապ Կէվաշն իտիլէր :

«Պէն պիւր թէաթրօ արթիսթիլիմ», տէտի կէնճ զըզ : «Պու սէօզլէր իւզէրինէ թէրզի շաշըն պիւր հալաէ էլպիսէլէրէ պազմաղա պաշլատը : «Պէն Ֆիլատէլֆիա շէհրինին պէօյիւք թէաթրօ-տուստա պիւր թազըմ րօլլար օյնամաղ իշխան զօնթրաթա կիրտիմ, վէ շիմտի պու էլպիսէլէր շէօյլէ վէ պէօյլէ թէպիլիլ էտիլիպ՝ իքի փարէշ-տի անէլէ պիթմէլի, տէտիլիմ կիպի սիգէ պու-սուսն իշխան տուղուսն իւճըլթ վէրէճէլիմ» :

— Թէրզի իսէ. «չօգ շիւպհէտէյիմ քի պէն պու իշի իւզէրիմէ ալապիլէճէ՝ քմիլիմ», տէտի : «Սահիհ տիր քի պու սապահլաշըն իշ իշխան տուա էթտիմ, զիրա էքմէյիմի զազանապիլմէք իշխան անա չօգ միւլթաճըմ, լաքին թամ պու իշի ետիմաղա պանա միւստատէ վաճըմը, օնա չօգ շիւպհէմ վար» :

«Պու նա՞սըլ օլապիլիլ», տէյու թէաթրօճը զըզ սիւալ էյլէտի :

— «Պանա էօյլէ կէլիյօր քի պէն պու իշի ետիմաճաղ օլուր իսէմ Բապպ Յիսուսա խըզմլթ էթմէքտէն իսէ՝ շէրիլէ խըզմլթ էթմիշ օլաճա-ղըմ», տէյու թէվազու իլէ ճէվապ վէրտի թէրզի :

«Ամմա սէն իշ իշխան տուա էթմէտին մի» : — «Էվվէթ» :

«Էօյլէ իսէ պէնիմ իշիմ շիմտի սանա տու-այա ճէվապ հալընտա կէ՞լմէտի մի» :

— «Պէն օնու պիլմէմ, էօյլէ կէօրիւնիյօր ամմա, պէն հիսս էտիյօրում քի պէն պու իշի ետիմամալըլմ» :

«Էօյլէ իսէ պանա նէ ետիմաճաղընը շիմտի պէյան էթ» :

— «Գափուլը զափայաճաղըմ, վէ տիզ իւզէ-րինէ կէլէրէք՝ Սէմափի Փէտէրիմէ նիյազ էտէ-ճէյիմ քի պանա շիմտի նէ ետիմաճաղըմ կէօ-թէրսին : Օ պանա ճէվապ վէրէճէք : Սէնտէ պէ-նիմ իլէ պէրապէր տուա էթմէք իսթէ՝ րմիսին» :

Պուսու տէմէյէ զալմաուր՝ թէաթրօճու քէն-տի իլէ պէրապէր տիզ չէօքտիլ : Ֆադիր թէրզի զալպիլինի Ալլահըն հուղուրընա տէօքտիլ, վէ քէնտինին պիլթիւն թէճըրիւպէսինի վէ Ալլահըն իրատէթիլին անլամաղ խուսուսուստա օլան կիւճըլիւնիւնիւ Անա սէ յլէտի : Խուսուսի օլարազ րէճա էյլէտի քի ալաճաղը ատըմտա Ալլահըն իրատէթիլին զարշը իշլէմիշ օլմաուրն : Քէնտի տուսալըն պիւր քիւշիւք չօճուզ սատէլիլի իլէ

էօյլէ պիւր սուրէթտէ թապտիմ էթտի քի վէ էն ճիւզիւ օլուսն ֆիքրինտէն կէլիւրմէտի քի պու տուսալընըն եանընտաքի ճանա պիւր թէլսիլի օլապիլիլ : Պիրտէն կէնճ թէաթրօճու զըզ իքի զօլլարընը անըն պօյնուսա սարարազ վէ ճանը-նըն ազապիլլէ «տիս, արթըզ պու էլպիսէլէր իշխան տէյիլ իլլա պէն ալլահալ օլան զըզ իշխան տուա էյլէ» տէյու ֆէրիատ էյլէտի :

Թէրզի հայրան զալարազ լալ օլտու : Պու զըզըն ճիւտաթ՝ մի եօզսա շազա մը էտիյօր իտի-յինի թէֆրիզ էտէմէտի : Իմտի էվվէլքի կիպի Բապպա սատէլիք իլէ քէնտինին եկնի շիւպհէ-լէրինի կէօթիլիւրիւ, զիրա զըզ հազիլաթլէն խա-լի՞մ մի եօզսա քէնտինին պու տուսալըլա էյլէ-նիյօր մը իտիլիլին անլայաճաղը : Տուա էթտի քի էյէր պու զըզ ճանը հազընտա ճիւտալէն տիւ-շիւնմէյօր իսէ՝ շիմտի տիւշիւնիւն, վէ Բապպ Յիսուսա քէնտի քէնտինի էպէտիլլէն թէլլիմ էյլէտին : Տուա էթտի քի քէնտինին շիմտիլէ զատար կէլիւրտիլի էօմիլէն տիւնեափի օլտու-ղուսն անլայաճաղ շէրիլէ պիւր ալլթ օլմազատան վազ կէլիլ՝ Ալլահըն իզզէթիլինէ վէ հէմճիւնիլին խալընա խըզմէթ էյլէտին :

Տուստան սօնրա պու իքի զըզ այաղա զալպտըլար վէ պիւր տազիլէ սիւքիլթ իլէ պիւրի պիւրինէ պապալար :

«Պէն պու տիքիշի արթըզ նէ սիգէ նէտէ պաշլապ պիւր քիմէյէ ետիտըրամում» :

— «Էօյլէ իսէ նէ՞ ետիմաճաղըն» :

«Պէն անլէրի օլտուղու հալաէ պրապաճա-ղըմ» :

— «Թէաթրօ իլէ օլան զօնթրաթլէն նէ՞ ետիմաճաղըն» :

«Ֆիլատէլֆիա թէաթրօ տիլէքթօրնա ետ-աճաղըմ քի օ րօլլարը օյնայ սալայաճաղըմ, վէ քէնտի իշխան տալի տուա էտէճէլիմ» :

— «Նէ զատար վազթտան պէրու թէաթրօ-տա օյնարըն» :

«Պէն սէնէտէն պէրու, վէ քէնտի իշիմի պիլթիւն զալպալէն սէվլէրիմ, հիշ պիւր ալֆա անը թէրք էթմէքլէյի տիւշիւնմէմիշիմ, պիւ-թիւն ճանըմը վէ ֆիքրիմի տօլտուրմուշ իտի : Պուսուս զատար պէնի զապթ էտէն տիւնեատա հիշ պիւր շէյ օլմամըշ : Լաքին պէն տալիմ իշխան անը թէրք էտէճէլիմ, վէ պիւր ալֆա տա-հա այաղըմ օ շանօնըն թալթալարը իւզէրինէ պապալաճաղ» :

— «Պու քօսթիլմէրի նէ՞ ետիմաճաղըն» :

«Անլէրի սազլայաճաղըմ, պէն սաղ զալտըզ-ճա անլէր պանա պու սաաթըն, պու եէրին վէ Ալլահըն պանա օլան ինայէթիլին զիքրիլէթի հալընտա զալմալը արըլար» :

— «Պուստան սօնրա էօմիլէնիւ նէյէ՞ զու-լանաճաղըն» :

«Տահա նէ ետփանճաղմը պիլմէմ: Չալըշա-
ճաղըմ հէր հանկը պիր եօլտա ֆախտէլի օլմադ-
լըղա վէ Բըրսաուսա՝ նէ եօլտա իսթէր իսէ խըզ-
մէթ էթմէքիլէ»:

Պունուն իւզէրինէ մահապէթլէ կէօրիւշ-
աիւք, վէ թէրղինն տիրի շէհասէթի իշին
սէրին մէմնունիլէթ սունարազ ալըլալըլար:
Պունտան սօնրա չօդ տէֆա կէօրիւշիւպ տուա
էտէրլէր վէ զօնուշուրլար իտի: Թէվպէ կաշն
զըզ կիւնտէն կիւնէ սապիթլէշտի, վէ կիթաիքճէ
շու քանաթա կէլաի քի Բապպ քէնտինի պու
եօլտա զըլաղուզալարազ «աթ էշտէն գա-
փարազ» խէլաս էլլէտի, (Յուգ. Դ. 23): Քէնտի
էօլէ հիս էլլէտի քի Ալլահ քէնտինի պունտան
պաշգա պիր եօլտա խէլաս էտէմէյէճէք իտի,
վէ պիր տիւշիւնկիւ շիւքրանիլթիւնի կիթաիքճէ
արթալըլար: Քէնտի պիր միւտաթէթ Ամիրիզանըն
շարգ վիւլայէթլէրինն պիրինտէ եաշատը. իմա-
նըն ալէնէն իզրար էտիպ Ալլահըն գալմը իլէ
պիրլէշտի: Չօդ տէֆա պու թէրղի տօթունա
եազտը: Մէքթուպարըն պիրինտէ շէօլէ եա-
զըլօր. «Պէն թէաթրօ իշիմի օլ գատար չօդ
սէվէր իտիմ քի անտէն ալըլմազ պէնիմ իշիւն
միւմքիւն տիր տէյու գանն էթմէզ իտիմ, վէ
անտէն զիյատէ տիւնեատա պիր շէյի սէվէպի-
լիրիմ տէյու տիւշիւնկիւ իտիմ: Լաքին շիմտի
Յիսուս պանա զըլմէթլի օլան պաշգա հէր հան-
կը պիր շէյտէն պինիհայէ տէրլէճէտէ զըլմէթլի
տիր: Շիմտի հագիգաթէն մէսուալմ: Սէլամէ-
թիմ գայնայան վէ տիւքէնմէզ պիր փունար կի-
պի տիր: Շիւքրանիլթիւնի հուտուտու եօզ
տըր: Բապպ իշինն իլլէմէք հասթէթիմ կիթ-
աիքճէ արթմազտա տըր»:

Պաշգա պիր մէքթուպտա տէյօր. «Սէվկիւ-
լիւ տօթուն, գամիրինէ օլ կիւն նաալ իթաաթ
էթաին իսէ՝ տաիմա իթաաթտա տէվամ էթ,
շիւնքիւ պու՝ պէնիմ թէվպէմէ վասթթա օլտու:
էսքի տօթլարըմ պանա կիւլիւլօրլար վէ ազ-
լընը շաշըրմըշ տէյօրլար: Լաքին Բապպ պանա
շու ինայէթլի իհսան էլլէտիլի պէնիմ իլէ թէա-
թրօտա պուլունան իքի զըզարըն տաիլի օրայը
պրապմալարընա վասթթա օլտու: Անլէր տէ
Բապպ Յիսուս արայօրլար, էլիմտէն կէլտիլի
գատար հէլաքտան գուրթուլմալարը իշինն չա-
լըշաճաղմ: Պէնիմ իշինն տուա էտին քի Բապպ
պանա եարտըմ էթսին: Օ գէման պէն տաիլի
Անըն իշինն իլլէմէքաշն չէքիմէյէճէթիմ»:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՅՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ-
ՆԵՐՈՒ Ա. ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐ

(Նար. 9 Թիւն)

Ինչպէս անցեալ թիւին մէջ յիշեցինք խորհրդակ-

ցական ժողովները միայն երեք օր տեւեցին. օրական 2
նիստ ունեցած ենք, 9—12 եւ 3—6: Ժողովները կրնանք
չորս մասերու բաժնել:

Ա. Մ. ՂՈԹԱԺՈՂՈՎՆԵՐ, որոնց յատկացուցաւ
ամէն նիւտի երեք քառորդ կամ մէկ ժամը:
Այս ժողովները մեզի մեծ օրհնութիւն եղան,
վասնզի կղզայինք Տէրոջը մեր առջեւ դրած գործին
մեծութիւնը եւ մեր տկարութիւնը, որով կենդանի
եղաւ մեր Տէրոջը ամէն ժամանակուան համար ճշմա-
րիտ խօսքը թէ առանց ինծի բան մը չէք կրնար ընել
(Յովհ. Ժ. 5), եւ ուստի ստիպուած էինք ծնրադրել
գործին Տէրոջը առջեւ խնդրելով որ զմեզ առաջնորդէ:
Քայլ առ քայլ: Աստուծոյ առջեւ խոնարհելու համար
կ'ուզենք յիշել թէ եղան կէտեր որոնց առջեւ հին
մարդը շատ պատճառներ կրնար գտնել զմեզ իրարմէ
պողեցնելու, հեռացնելու, բայց ճիշդ այդ աղօթածո-
ղովները մեզի զօրութիւն տուած էին գործել Բ. Կորնթ.
2. 3-4ի համաձայն:

Բ. ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ.— Լսեցինք զանազան տե-
ղերէ տեղեկագիրներ զանազան անձանորթիւններու
բերնէն: Այս տեղեկագիրները 4 մասի կրնանք բաժնել,
Մարտէյլէն, Արտէշի դաշտէն, Լիօնի դաշ-
տէն եւ Բարիլէն: Ուրախութեամբ լսած ենք թէ
Մարտէյլի գործը այս երեքուկէս տարուան մէջ քաւա-
կան յաւաք գացած է ամէն տեսակէտով: Քաղաքին
կեդրոնէն դատ ուր Կիրակի օրուան պաշտամունքներ եւ
սողօթաժողով եւ շաբաթամիջի աղօթաժողովներ տեղի
կ'ունենան, չորս ուղղութեամբ ժողովներ սկսուած
են վեց զանազան տեղերու մէջ, նաեւ Կար-
տանի մէջ, որ քաղաքէն ժամու 18: չափ հեռու է
թրէյնով: Այս տեղերու մէջ հայ աւետարանականներու
թիւը 600ի կը հասնի:

Մարտէյլի եկեղեցին այս պահուս լըծօրէն կը
զբաղուի անձնակազմի շէնք մը ունենալու խնդրով,
վասնզի անձնակազմի ոեւէ սրահ մը չունենալը պատճառ
կ'ըլլայ որ յաճախ ժողովներու ժամանակը եւ արդ
փոխուի, եւ երբեմն ալ ժողովները բաւորովին ձգուին,
ինչ որ ժողովուրդին մէջ բարոյական եւ հոգեւոր տկա-
րութիւն կ'արթնցնէ: Տէրոջը գործը նոյնքան եռանդով
տարածուած է Արտէշի նահանգին մէջ, ուր մէկ աւե-
տարանիչ իրեն կամաւոր օգնականներու միջոցաւ այդ
դաշտի տանեակ գիւղերու մէջ գտնուած աղջային-
ներու Աստուծոյ խօսքը բերած է: Այս դաշտին մէջ
ալ կը գտնուին 4-500 աւետարանականներ:

Լիօնի դաշտն ալ, Լիօնի կեդրոն ունենալով ընդար-
ձակ տարածութիւն ունի, շրջափակելով 3 գաւառ իր
մէջ. Rhône, Loire, Isère, իրենց տանեակ հայաշատ քա-
ղաքներով: Լիօնի հովիւը իր օգնական աւետարանիչնե-
րով եւ աւետարանչուհիով այս գործը կը վարէ: Այս
դաշտին մէջ կը գտնուին 350ի չափ աւետարանական-
ներ: Բոլոր տեղերէն ալ քաջալերական 2 կէտեր լսած
ենք, ա. թէ Տէրը այս անցեալ ժամանակին մէջ մեր
համայնքներուն մօտ եղած է եւ շատ երիտասարդներ
ու երիտասարդուհիներ ինքզինքնին Տէրոջը յանձնելով
փրկութիւնը գտած եւ իրենց ուրախութիւնը ուրիշներու
ալ պատմած եւ անոնց փրկութեան պատճառ եղած են:
Երկրորդ միթիւարական եւ քաջալերական կողմն ալ այս
է որ այդ հոգեւոր ժողովներուն շատ մը լուսաւորչա-
կաններ ալ կը մասնակցին առանց խտրութեան: Բոլոր
ներկաներու միտքը համաձայն էր այս կէտին վրայ

թէ առատ պատեհութիւն տան բոլոր Աստուծոյ խօսքը լսել ուղղորդուելու առաջնայն հարանուանութեան խարու-թիւն զննելու եւ ոչ ալ զանոնք տեւէ կերպով իրենց մայրենի եկեղեցիէն ուժացնելու : Այս պատեհութեամբ միութիւնս ա՛ն Վերապա՛հ բացարձէ կերպով կը յայտարարէ թէ մենք բնաւ մտադրութիւն չունինք ուրիշ հարանուանութեանց վերաբերող տեւէ մէկը մեզի հրապարակելու եւ բողոքականներ աւելցնելու ինչ-պէս ումանք կը փորձուին խորհիլ, հապա մեր միակ նպատակն է Յրանալի մէջ գտնուած հոգեւոր կեանքը սիրողներն ու գնահատողները Աստուծոյ խօսքին շուրջը հաւաքել եւ զանոնք Տէրոջը գործին լծել :

Որքան որ ուրախալի էր այս դաշտերու մասին լսել նոյնքան ալ ցաւալի էր լսել թէ Բարիկի դաշտը Աւետարանին համար մինչեւ հիմա դեռ գոց մնացած էր : Թերթիս նախընթաց թիւերէն միայն մէջ թղթակ-ցութիւն մը հրատարակած ենք արդէն ասկէ առաջ, ասկէ յետոյ տեւէ նշանակալից բան մը տեղի չունեցաւ : Փրանսական ընկերութիւն մը կայ pro-Arménien անունով որ դեռ չկրցաւ տեւէ աւետարանիչ մը կամ հովիւ մը գտնել Բարիկի համար, ուր 1000 է աւելի աւետարանա-կաններ եւ աւետարանի խօսքին կարօքը քաշողներ կան : Ամերիկայի Հայ Աւետարանչական ալ հակառակ իր փա-փաքներուն չկրցաւ մինչեւ հիմա տեւէ գործնական քայլ մը առնել : Արդ, այն սրտառուչ եւ կոչ ընող տեղե-կագրէն յետոյ ժողովս միաձայնութեամբ որոշեց նա-մով մը գրել A. C. O. ի վարչութեան, խնդրելով որ հոգի ըստ կարի շուտով կարգադրութիւն մը ընել Բարի-կի համար, ըլլայ այն առանձին եւ կամ համագործակ-ցութեամբ Հայ Աւետարանչականի կամ pro-Arménien ի :

Գ. — ԲԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆԵՐ, որոնք ժողովներու կարեւոր մէկ մասը գրաւեցին : Ասոնք զանազան եկե-ղեցիներու մէջ ժամանակի ընթացքին երեւան եկած գոթաւորութիւնները յարգելու եւ զանոնք լուսաբա-նելու պէտք էր ծառայէին : Նիւթերը հետեւեալներն էին. 1.) Ինչ ըլլալու է Յրանալի Հայ աւետ. եկեղե-ցիներու ուղղութիւնը : 2.) Հոգեւոր կեանքը մեր եկեղե-ցիներուն եւ մեր ընկերական կեանքին մէջ, (ընտանիք, ընկերութիւններ եւայլն) : 3.) Ինչպէ՞ս կազմակերպելու ենք մեր աղօթաժողովներն ու Ս. գրական ուսումնա-սիրութիւնները ամենալաւ արդիւններու հասնելու համար : 4.) Աւետարանի գործը եւ Աւետարանի գործա-ւորը : Այս բոլոր բանախօսութիւններէն յետոյ օգտա-կար խորհրդածութիւններ ունեցած ենք :

Դ. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, որոնց մէջ քննուած են առաջին բանախօսութեան առթիւ մէջ գրուած առաջարկները : Այս խորհրդակցական ժողով-ներու մէջ հետեւեալ կէտերը միաձայնութեամբ կար-գադրուած են. — 1.) Անոնք որ իրենց փրկութեանը վստահութիւնն ունին, արդէն անտեսանելի եկեղեցւոյ մէկ անդամն ըլլալով՝ նաեւ արածութիւնն ունին եկե-ղեցիին անդամ ըլլալու. ուստի այսպիսիներու հրապա-րակային վկայութիւնը լսուելէ ու իրենց կեանքին ու Ս. գրական ճշմարտութեանց մասին ընդունակ ըլլալը ընտելէ եւ տեսնուելէ յետոյ թէ եկեղեցիէն ու դուր-սէն ալ բարի վկայութիւն միայն կը լսուի իրենց մա-սին, հրապարակային դաւանութեամբ անդամ կ'ըտրուին, եւ հաղորդութեան սուրբ սեղանին կը մասնակցեն : Ու-րիշ տեղերէ եկող եկեղեցւոյ անդամ մը Յրանալի Հայ աւետ. եկեղեցիներու իւր եկեղ. անդամ պիտի ընդունուին,

միայն այն առիտ երբ իրենց հրապարակային վկայու-թիւնն ու իրենց կենցաղավարութիւնը իրենց փրկու-թեան մասին վստահութիւն ներշնչեն :

Եկեղեցիի անդամներ իրարու հետ վերաբերելու են Մատթ. ԺԸ. 15-17 ի համաձայն :

2.) Հաղորդութեան մասնակից կրնան ըլլալ եկե-ղեցւոյ անդամներէն զատ ուրիշ հարանուանութիւններէ անոնք որ իրենց վկայութեամբն ու վարքովը իւր հա-ւատացեալներն նկատուած են :

3.) Մկրտութեան հարցը հետեւեալ կերպով լուծ-ուած է. — Սկզբունքով կ'ընդունուի որ մկրտութիւնը հա-ւատալէ յետոյ տեղի ունենայ եւ այս մասին ալ հարկ եղած լոյսը պիտի տրուի. բայց որովհետեւ մկրտութիւնը տեւէ կապ մը չունի փրկութեան հետ, ծնողները ազատ թողութիւն են մկրտել տուլ իրենց զաւակները իրենց փափաքին համաձայն մանուկ հասակին մէջ, կամ չա-փահասութեան ասին :

4.) Եկեղեցւոյ անդամ քոյրեր հոգաբարձական մարմնոյ ընտրութեան առթիւ քուէ կրնան տալ բայց քուէ չեն կրնար ընդունիլ :

5.) Երկու տարիէ ի վեր Մարտէլի եկեղեցիին մէջ գործածուած եկեղ. կանոնագիրը միւս եկեղեցիներու ներկայացուցիչներու յանձնուեցաւ, որպէսզի մինչեւ յառաջիկայ տարին քննեն տեսնելու թէ իրենց պարա-գաներուն յարմարցուելու համար ինչ փոփոխութիւննե-րու կը կարօտի : Եթէ Տէրը կամի յառաջիկայ տարուան միութեան ժողովի խորհրդածութեան կարեւոր նիւթե-րէն մին ըլլալով՝ կանոնագիրը վերջնականապէս պիտի վերաքննուի եւ հաստատուի ընդհանուր եկեղեցիներու մէջ գործածուելու համար : Յառաջիկայ ժողովը եթէ Տէրը կամի դարձեալ Լիօնի մէջ պիտի գումարուի, 1928 Սեպտեմբեր ամսուան մէջ :

6.) Յրանալի Հայ աւետարանական եկեղեցիներու վերին հսկողութիւնը առժամապէս յանձնուեցաւ խառն ժողովոյ մը, որուն երեք անդամները Յրանալի են իսկ երեքը հայ :

Միութիւնս այն եզրակացութեան եկած է որ Յրանալի հոգեւոր գործը մասամբ մը միայն կատար-ուելու համար առնուաղն հինգ աւետարանիչներու եւ մի քանի Ս. գրավաճառներու պէտք ունի : Յրանալի հոգեւոր գործով հետաքրքրուող իւրաքանչիւր անձնա-ւորութիւնէ կը խնդրենք որ մեզի հետ աղօթքով պատե-րազմակից ըլլան, որպէսզի Տէրը մշակներ հանէ այս դաշտին : Սիրելի է մեզ նաեւ յիշել թէ այն օրերու երեկոյեան ժամերը աւետարանչական ժողովներու յա-կացուեցան եւ Տէրը առատապէս օրհնեց զմեզ ու փը-կումներ աւելցան եկեղեցիին :

Յրանալի Հայ աւետ. եկեղեցիներու առաջին մի-ութեան ժողովը այսպէս փակուեցաւ, եւ բոլոր ներկա-յացուցիչները ուրախութեամբ միխիտարուած եւ քաջա-ւերուած իրենց ճամբան դացին եւ Աստուծոյ փառք սուրին որ Տէրը իր գործութիւնը ակարնելու մէջ եւ անոնց միջոցաւ յայտնած է :

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպգր. Ա. Երեցեան, 40, Րիւ տէ Տօմիկիքին - Մարտէլ